



# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 16/26502-Ն

08. 05. 2014 թ.

Բնապահպանական տեղեկատվության  
հասարակական կենտրոն  
Օրհուս կենտրոնի համակարգող  
տիկին Ս. Այվազյանին

## Հարգելի տիկին Այվազյան

Երևանի քաղաքապետին ուղղված Ձեր 30.04.2014թ. հ.ԵՕԿ\_14/07 գրության վերաբերյալ՝ կապված Երևանյան լճի հայելու և ափամերձ տարածքի, ինչպես նաև Գետառի հունի մաքրման աշխատանքների հետ, հայտնում եմ, որ բարձրացված հարցերը քննարկվել են քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումներում:

Տեղեկացնում ենք, որ Երևանյան լճի էկոլոգիական վիճակի բարելավման ուղղությամբ կազմված է ծրագիր, որում ներառված են մի շարք հիմնավոր առաջարկներ: Նշված ծրագիրը քննարկվել է 2013թ. ապրիլի 8-ին Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի բնապահպանական հանձնաժողովի նիստում և ստացել է դրական կարծիք: Առաջիկայում նախատեսվում է իրականացնել միայն լճի հայելու մեխանիկական մաքրման աշխատանքներ:

Երևանյան ջրամբարի շահագործումն ու սպասարկումն իրականացնում է քաղաքապետարանի ենթակայության «Ջրային կառույցների» ՓԲ ընկերությունը, որը կատարում է նաև Երևանյան լճի մաքրումը բերվածքներից:

2010թ. «Ջրային կառույցների» ՓԲ ընկերության միջոցների հաշվին Հրազդան գետի հունի վրա Երևանյան ջրամբար մտնող հատվածում կառուցվել է լողացող աղբահավաք կայան, ինչը հնարավորություն է տվել հնարավորինս կանխել գետի հոսանքով բերված լողացող կենցաղային աղբի մուտքը ջրամբար: Աղբահավաք կայանի կառուցման համար ծախսվել է 12,0 մլն. դրամ: Աղբահավաք կայանում կուտակված աղբը հավաքվում է լաստանավի վրա, մոտեցվում ափին, ապա կունկի միջոցով տեղափոխվում է ափ և այնտեղից բեռնատար ավտոմեքենայով հեռացվում:

Ջրամբարի մակերեսի լողացող աղբը նույնպես նավակի միջոցով մոտեցվում է դեպի պատվար, հավաքվում, մաքրվում և հեռացվում է այնտեղից բեռնատար ավտոմեքենաներով: Աշխատանքները կրում են մշտական բնույթ՝ կախված ջրամբարի հայելու մակերեսին հավաքված բերվածքների քանակից: 2010-2014թթ. Երևանյան ջրամբարում կատարվել են 18,1 մլն.դրամի աղբի հավաքման և տեղափոխման աշխատանքներ:

«Ջրային կառույցների» ՓԲ ընկերության կողմից իրականացվող աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Մաքրման աշխատանքներ են իրականացվում նաև Շենգավիթ վարչական շրջանի կողմից՝ Երևանյան լճի ձախ ափում պարբերաբար կազմակերպվող գարնանային շաբաթօրյակների միջոցով:

Բացի այդ, վարչական շրջանի տարածքում 2010-2014թթ. ապրիլ-մայիս ամիսներին կատարվել են Գետառի հունի մաքրման աշխատանքներ: 2010թ. աշխատանքներն կատարել է «Հիմնաքարեր» ընկերությունը, աշխատանքների արժեքը կազմել է 4997388,0 ՀՀ դրամ, 2011թ. «Ռեմ-Գրուպ» ՍՊԸ-ն՝ 3180000,0 ՀՀ դրամ, 2012թ. «Ջին-Շին» ՍՊԸ-ն՝ 4800000,0 ՀՀ դրամ, 2013թ. «Ռեմ-Գրուպ» ՍՊԸ-ն՝ 4170540,0 ՀՀ դրամ, 2014թ. «Իմանի Հոլդինգ» ՍՊԸ-ն՝ 3600000,0 ՀՀ դրամ: Վարչական շրջանի 2015-2017թթ. նախնական ծրագրերով նախատեսվել է 5,0-ական միլիոն ՀՀ դրամ յուրաքանչյուր տարվա համար: Կապալառու կազմակերպությունները որոշվում են մրցութային կարգով տարվա սկզբին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝



Ս. ՄՀԵՐՅԱՆ

Կատ.՝ Է.Շաքարյան  
Հեռ.՝ 514-178